թյուն տեսնում էին աբեղաների ու քահանաների կողմից արված, բերում էին, գլուխն ու մորուքը խուզում, մահու չափ բրածեծում էին: Այսպես մնում էին իրենց կյանքի ընթացքում:

ԳԼՈՒԽ ԾԳ
ԵՐԿՆԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկրաշարժից առաջ ինչ-որ նշան երևաց երկնքում. մի գիշեր օդում տեսան կապույտ նիզակահուններ երկայն ու լայն՝ հարավից, հյուսիսից, երկու ծայրերը բարակ էին, ինչպես գեղարդի ծայրեր: Քիչ-քիչ իր պոչերը դարձրեց արևելք և արևմուտք, այդպես մնաց քսան օր ու անհայտացավ: Սրանից հետո երևաց սաստիկ մեծ մի աստղ զենիթում, մյուս աստղերից սաստիկ մեծ, գույնով դեղին, երկայն ու լայն գեսերով, ձյունի նման սպիտակ, դեպ արևմուտք ձգված մի աստղ: Գեսերը փայլում էին, կարծես կայծեր էին թափվում երկրի վրա և ահարկու էր տեսնողներին: Այդպես մնաց մի ամիս: Լինում էր այնպես, որ երկու օր երևում էր մինչև առավոտ, երբեմն կեսգիշերին, երբեմն առավոտյան, երբեք տեղից չէր շարժվում, ապա անհայտացավ:

Սրանից հետո արևելքում երևաց մի կարմիր աստղ, ինչպես որդան կարմիր. սա ուներ երեք գես՝ մեկը սպիտակ, երկրորդը՝ աստղագույն, երրորդը՝ խարտյաշ. բոլորագունդ էր, ինքը բարձր, գեսերը կախված էին դեպի երկիր: Ինքը անշարժ էր, գեսերը երբեմն-երբեմն շարժվում էին: Վեց օր մնաց, վեց օրից հետո գեսերը ցրվեցին, իսկ ինքը շատ օրեր երևում էր, և անհետ կորավ:

ԳԼՈՒԽ ԾԴ
ԵՐԿՆՔԻ ՄՅՈՒՍ ՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Մինչդեռ ես մանուկ իմ հայրենի գյուղ Քանաքեռում էի, խոսում էինք հասակակից մանուկների հետ: Զրույցի ընթացքում մանուկներն ասացին, թե օձը ապրում է մինչև հազար տարի, հազարերորդ տարում դառնում է վիշապ, իսկ Աստծու հրեշտակները նրան քա-

շում են երկինք և թողնում են մեծամեծ քարերի վրա, սատկում է: Այս մանուկների առասպել է, բայց ինձ հավաստի լինել է թվում, քանզի իմ ծերության ժամանակ, երբ ես Սուրբ ուխտ Օհանավանքում էի, մի օր ժամը 7-ին պարզ եղանակի արևմտյան կողմում երկինքը վառվեց ինչպես հուր, կայծակներ էին իջնում վար, երբեմն ճեղքում էր ինչպես փայլակ, երբեմն խաղաղվում էր: Հրից դեպի ցած կախված էր պարանի նման (մի բան) մինչև երկիր, պարանի ծայրին կապված էր վիշապանման մի բան, կապույտ էր ինչպես ամպ: Գլուխը, մեջքը, պոչը որպես ճիշտ և ճիշտ վիշապի, պոչը շարժում էր այս ու այն կողմ, գլուխն ու մեջքը գալարվում էին և քիչ-քիչ բարձրացավ երկրից և հասավ կրակին. կլանեց վիշապին, այնտեղ մի փոքր մնաց, ապա հուրը նորից պատռվեց, վիշապաձև սևացավ ինչպես ածուխ, հանկարծակի ընկավ գետին, բայց չիմացանք, թե ուր ընկավ: Բայց այսքանը շատերը տեսան, ինչ որ նկարագրեցինք:

ԳԼՈՒԽ ԾԵ
ՕՍՄԱՆՅԻՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖՌԱՆԿՆԵՐԻ ԴԵՄ

1131 (1682) թվին օսմանցիների թագավոր սուլթան Մուրադը զորակոչեց իր բոլոր հպատակներին և գնաց ֆռանկների ամրացված քաղաք Պեչի վրա*: Այդ քաղաքը կայսեր իշխանությանն էր ենթարկվում, որին իրենք եփրաթոլ (իմպերատոր) են կոչում: Սա խիստ անառիկ էր, քանզի երեք կողմից ձոր էր և պարսպված բակ՝ բարձր ու լայն: Երկու որմերի միջև կար փողոց և երկու դռները կախված էին փողոցի երկու ծայրերին: Մի դուռը բուն քաղաքի ներսի որմի վրա էր, մի դուռը արտաքին որմի վրա: Այս չորս դռները միմյանց դիմաց էին, բայց ոչ թե գետնին էին հաստատված, այլ կախված էին վերևից վար: Մեքենաներով քաշում և վար էին իջեցնում: Քաղաքի մի կողմում դաշտ էր և հարթ, որտեղ դռներն էին: Այս կողմից թուրքերը (մահմեդականները) կատաղի էին պատերազմում: Նույնպես և ֆռանկներն էին կռվում:

Երբ պատերազմը խստացավ, ֆռանկները նրան խաբեցին: Քանզի կռվի ժամին կանաչ դրոշակի հետ էին բռնել և խաչվառը:

* Պեչը Բուդապեշտի մի առանձին մասն էր: